



ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՅՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համաշխարհային ֆինանսական շուկաների զարգացումները  
Ամսական տեսություն  
( Նոյեմբեր 2017թ)



Հարգելի այցելու,

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից ներկայացված ֆինանսական շուկաների վիճակի և զարգացումների ամսական տեսությունը հրապարակվում է ամսական հաճախականությամբ և իրենից ներկայացնում է ՀՀ ֆինանսական շուկաներում իրականացված գործարքների ամփոփ վերլուծություն: Այն իր մեջ

պարունակում համաշխարհային ապրանքային և ֆինանսական շուկաներում տեղի ունեցած գործընթացների ու միտումների ամփոփ տեղեկատվություն. ՀՀ մակրոտնտեսական հիմնական ամսական ցուցանիշների դիտարկում. ՀՀ ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության ընթացքում իրականացված գործառնությունների վերաբերյալ, ինչպես նաև պետական, կորպորատիվ արժեթղթերի շուկաների և միջբանկային շուկաներում կնքված գործարքների վերաբերյալ ամփոփ վերլուծություն:

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից համաշխարհային ֆինանսական շուկաների զարգացումների վերլուծության նպատակը այս շուկաներում տեղի ունեցող գործընթացները տեսանելի դաշտում պահելն ու դրանց ազդեցությունը ՀՀ եվրոպարտատոմսերի, ՀՀ ներքին ֆինանսական շուկայի և ընդհանրապես՝ երկրի մակրոտնտեսական վիճակի վրա հասկանալն է, ինչը, նկատի ունենալով ազդեցությունների լազային(ժամանակային առումով խզված) բնույթը, կարևոր է մեր տնտեսության համար ապագա զարգացումների կանխատեսման տեսանկյունից: Մյուս կողմից՝ համաշխարհային կապիտալի շուկաներում ներդրողներ են նաև ՀՀ սուբյեկտները(ԿԲ, կենսաթոշակային ֆոնդեր, այլ ինստիտուտներ և անհատներ), ինչը ևս կարևոր է դարձնում այստեղ ընթացող զարգացումների վերլուծությունը: Այս՝ ամսական պարբերականությամբ հրապարակվող տեսությունը ամփոփում է ՀՀ եվրոպարտատոմսերի, համաշխարհային ապրանքային(մետաղներ, էներգակիրներ, պարենային ապրանքներ), արժույթային(դոլարի ինդեքս, եվրո, ՌԴ ռուբլի) և կապիտալի(զարգացող և զարգացած երկրների ֆոնդային ինդեքսներ և պետական պարտատոմսերի եկամտաբերություններ) շուկաներում տեղի ունեցող զարգացումների վերլուծությունը: Ամսական տեսությունը հիմնվում է Investing.com հարթակի հրապարակած վիճակագրության վրա, իսկ վերլուծությունների հիմքում Reuters գործակալության տեղեկատվական ու վերլուծական հրապարակումներն են և սեփական դիտարկումները: ՀՀ սոցյալ տնտեսական վիճակի հետ կապված հիմնական ցուցանիշների ներկայացումը նպատակ ունի ներկայացնել ՀՀ տնտեսական ակտիվության, տնտեսության հիմնական ճյուղերի զարգացումների, սպառողական և արդյունաբերական գների ինդեքսների, արտաքին ապրանքաշրջանառության և բնակչության միջին ամսական աշխատավարձերի ընդհանուր միտումները, ինչը թույլ է տալիս գնահատել ֆինանսական շուկաների վրա մակրոտնտեսական և սոցյալ-տնտեսական ընդհանուր վիճակի ազդեցությունները: ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության շրջանակներում ներկայացված են ԿԲ կողմից կիրառվող անուղղակի գործիքների կիրառումը, դրանց շրջանակներում իրականացված գործարքները, ինչպես նաև դրամական զանգվածի կառուցվածքը և դրանում իրականացվող փոփոխությունները: ՀՀ արտարժույթի շուկայի հետ կապված ներկայացված են ԱՄՆ դոլարի, եվրոյի, ՌԴ ռուբլու բորսայական, արտաբորսայական, ներբանկային և միջբանկային գործարքները, ինչպես նաև ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի շուկայում իրականացված գործառնությունները: Արժեթղթերի շուկայի վերլուծությունը բաղկացած է պետական և կորպորատիվ

արժեթղթերի շուկաների հետ կապված դիտարկումներից: Պետական պարտատոմսերի շուկայի հետ կապված ներկայացվում են առաջնային շուկայում դրանց տեղաբաշխումները, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվող հետգնումները, բորսայական և արտաբորսայական շուկաներում կնքվող գործարքները, գործակալ բանկերի կողմից բորսայական գնանշումները, ինչպես նաև պետական պարտատոմսերի եկամտաբերության կորերի փոփոխությունները: Կորպորատիվ արժեթղթերի շուկայի հետ կապված ներկայացվում են բորսայական և արտաբորսայական տեղաբաշխումները, բորսայական շուկայում կնքված գործարքները, դրանց շուկա ստեղծողների գնանշումները: Միջբանակային շուկայի վերլուծությունն իրենից ներկայացնում են միջբանակային վարկային, սվոփ և ռեպո շուկաների ամփոփ դիտարկումներ:

Ամբերդ հետազոտական կենտրոնի կողմից ֆինանսական շուկաների վիճակի և զարգացումների վերաբերյալ հրապարակվող ամփոփագրի տեղեկատվական հիմքերն են ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ Կենտրոնական Բանկի, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա ԲԲԸ հրապարակումները և վիճակագրական աղբյուրների բազաները: Ձեզ ներկայացվող վիճակագրական աղյուսակների, գծապատկերների և ներկայացվող տվյալների մի մասը նշված մարմինների կողմից օրական կտրվածքով հրապարակվող տվյալների համախմբման արդյունք են:

Սույն վիճակագրական նյութերը, վերլուծությունները և դիտարկումները ՀՊՏՀ Ամբերդ հետազոտական կենտրոնի մտավոր սեփականությունն են և դրանցից օգտվելու դեպքում հղումը կենտրոնի կայքին պարտադիր է:



**«Ամբերդ» հետազոտական կենտրոն**

Երևան, Նալբանդյան 128, թիվ 3 մասնաշենք Հեռ.՝ (+37410) 593-479 Էլ. հասցե՝ [info@amberd.am](mailto:info@amberd.am)

## Բովանդակություն


|  |    |
|--|----|
| Ամփոփ տեսություն: .....                  | 5  |
| ՀՀ եվրոպարտադրումներ:.....               | 6  |
| Համաշխարհային ապրանքային շուկաներ:.....  | 7  |
| Համաշխարհային արժույթային շուկաներ:..... | 11 |
| Համաշխարհային կապիտալի շուկաներ: .....   | 14 |

*Ամփոփ տեսություն:* 2017թ-ի նոյեմբերին համաշխարհային շուկայում բավականին հակասական միտումների են դրսևորվել: Ապրանքային շուկաներում տարբեր ակտիվների գների չկոռելացված դինամիկա է դրսևորվել, արժույթային շուկայում դուլարը փոխել է ուղղությունը և սկսել է արժեզրկվել հիմնական արժույթների՝ այդ թվում եվրոյի նկատմամբ, իսկ ռուսական ռուբլին կտրուկ տատանում է ունեցել, սակայն ամսվա արդյունքերով մեծ փոփոխություն չի կրել: Միջազգային կապիտալի շուկայում շարունակվել է ամերիկյան ֆոնդային ինդեքսների աճը, իսկ մյուս ակտիվների գները հակասական միտումներ են ունեցել: Հայաստանյան եվրոպարտատոմսերի եկամտաբերությունները շարունակել են ընդհանուր տրենդը՝ արձանագրելով եկամտաբերությունների նվազում:

ՀՀ եվրոպարտատոմսեր: Նոյեմբերին ՀՀ եվրոպարտատոմսերի եկամտաբերությունները նախորդ ամսվա փոքր աճից հետո շարունակել են ընդհանուր նվազման միտումը: 6% արժեկտրոնային եկամտաբերությամբ 2013թ-ին թողարկված, 2020թ-ին մարվող եվրոպարտատոմսերի եկամտաբերությունը նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 4.2, իսկ 7.15% արժեկտրոնային եկամտաբերությամբ 2015թ-ին թողարկված, 2025թ-ին մարվող եվրոպարտատոմսերինը՝ 2.8%-ով: Եկամտաբերությունները 2016թ-ի նոյեմբերի նկատմամբ նվազել են համապատասխանաբար 28.91 և 25.17 տոկոսով:

Նոյեմբերի 30-ի դրությամբ առաջինի եկամտաբերությունը կազմել է 3.8, իսկ երկրորդինը՝ 5%:

Գծապատկեր 1 ՀՀ եվրոպարտատոմսերի եկամտաբերությունները, 2016թ նոյեմբեր -2017թ նոյեմբեր




Ձևավորված ընդհանուր նվազման միտումը կարելի է բացատրել համաշխարհային շուկայում ՀՀ եվրոպարտատոմսերի դիրքերի աստիճանական ամրապնդմամբ, որին էականորեն նպաստում է նաև երկրում պահպանվող ֆինանսական և հարկաբյուջետային կայունությունը, և որպես արդյունք՝ միջազգային վարկանշավորողների կողմից տրված «կայուն» հեռանկարով

վարկանիշները: Նոյեմբերին տեղի ունեցած նվազումը ուղեկցվել է գների տատանողականության աճով, ինչն ամենայն հավանականությամբ պայմանավորված է միջազգային շուկայում փոքր ինչ ավելացած անկայունությամբ:

Ընդհանուր առմամբ՝ ՀՀ եվրոբոնդերի եկամտաբերությունների դինամիկան վկայում է շուկայի մասնակիցների կողմից ՀՀ «երկրի ռիսկի» գնահատականի բարելավման մասին:

Նշենք, որ երկրի թողարկած եվրոպարտատոմսերի եկամտաբերությունը լավագույնն է արտացոլում այս ռիսկի փոփոխությունը, իսկ սեփական արժույթով պարտատոմսերի եկամտաբերությունն իր մեջ ներառում է նաև փոխարժեքի ռիսկը:

**Համաշխարհային ապրանքային շուկաներ: Մեքսիկոյի շուկայում նոյեմբեր ամսին տարբեր ակտիվների գների չկոռելացված միտումներ են դրսևորվել: Ոսկու գներն աճել են 0.5, իսկ պղնձինն՝ ընկել 1.8 տոկոսով:**



**Ոսկին** նոյեմբերին բարձր տատանողական դինամիկա է ունեցել՝ պայմանավորված գեոքաղաքական ռիսկերով, ԱՄՆ հարկային բարեփոխումների զարգացումներով ու սպասումներով և դրամավարկային քաղաքականության հեռանկարներով:

Ամսվա առաջին կեսին ընդհանուր առմամբ արձանագրվել է աճի դինամիկա՝ հիմնականում Հյուսիսային Կորեայի շուրջ և Միջին Արևելքում կուտակվող քաղաքական ռիսկերով, ինչպես նաև հարկային քաղաքականության վերաբերյալ անորոշությամբ պայմանավորված: Սակայն նոյեմբերի 16-ին ԱՄՆ կոնգրեսը հավանության արժանացրեց Թրամփի վարչախմբի ներկայացրած հարկային նոր օրինագիծը, և ոսկին կտրուկ անկում ապրեց: Ամսվա երկրորդ կեսին ոսկու գներն էլ ավելի տատանողական էին՝ իրենց վրա կրելով հարկային օրինագծի հետագա ճակատագրի վերաբերյալ անորոշությունը (այն դեռ պետք է մտնի Սենատ), դրամավարկային քաղաքականության սպասումներն ու գեոքաղաքական ռիսկերը:


*Ընդհանուր առմամբ՝ նոյեմբերին ոսկին շարունակել է պահպանվել աճող տրենդի գծի վրա, գրեթե նույն գործոնների և սպասումների ազդեցությունը, ինչ նախորդ ամիսներին:*

**Պղնձի** գները նախորդ ամսվա կտրուկ աճից հետո աստիճանական կոռեկցիա են ենթարկվել՝ կրկին Չինաստանի տնտեսությունից եկող ազդակների ներքո: Այս անգամ շուկայի մասնակիցների որոշումների վրա ազդել այս երկրում անշարժ գույքի գները, որոնց աճը կանգ է առել, իսկ որոշ դեպքերում՝ փոխել ուղղությունը: Իսկ պղնձի գնի 12 ամսյա աճը կտրուկ դանդաղել է՝ նոյեմբերին կազմելով 15.8 տոկոս:

*Գծապատկերից կարելի է տեսնել՝ պղնձի գինը անցած ամիս հասել և հետք էր հրվել դիմադրության գծից ներքև, և կոռեկցիան շարունակվել է նաև այս ամիս՝ իմպուլս ստանալով չինական ցուցանիշներից:*

**Էներգակիրների շուկայում** հոկտեմբերին նավթի գները շարունակել են աճել՝ 3.5 տոկոսով, իսկ դիզելային վառելիքի գնի աճը կազմել 0.4 տոկոս:






**Նավթի** գները նոյեմբերը սկսել են կտրուկ աճով՝ պայմանավորված մի կողմից Սաուդյան Արաբիայում քաղաքական նոր լարումներով, և մյուս կողմից՝ ԱՄՆ-ում նավթաշտարակների թվի ցուցանիշի հրապարակումով Բեյքեր-Հյուջսի կողմից, որը նվազել էր մինչև վերջին 6 ամիսների նվազագույն մակարդակի: Մինչև նոյեմբերի 6-ը գները մոտեցան 65 դոլարի սահմանագծին, սակայն աստիճանաբար սկսեցին նահանջել՝ այս անգամ արդեն արձագանքելով ԱՄՆ-ում նավթի կոմերցիոն պաշարների աճին:

Ամսվա երկրորդ կեսին նավթի գնի դրայվերը ամսվա վերջին Վիեննայում տեղի ունենալիք հանդիպման արդյունքների վերաբերյալ սպասումներն էին. կորոշե՞ն արդյոք ՕՊԵԿ-ն անդամ և ոչ անդամ երկրներն ընդլայնել առաջարկի սառեցման ծրագիրը 2018թ-ի մարտից հետո թե՞ ոչ:

*Ընդհանուր առմամբ՝ նավթի գները շարունակել են զգայուն մնալ ՕՊԵԿ-ի գործողությունների սպասումների և ԱՄՆ նավթային ցուցանիշների նկատմամբ, և ամրապնդվել 60 դոլարից բարձր մակարդակում:*

**Պարենային շուկայում շաքարավազի գինը շարունակել է վերականգնումը**, նոյեմբերին աճելով 1.5 տոկոսով՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ 25.6 տոկոս անկման դիմաց, իսկ **ցորենի գինը ամսվա արդյունքներով աճել է 0.7 տոկոսով:**

Վերջին տարում շաքարավազի գների անկումը պայմանավորված էր Բրազիլիայում բերքի կտրուկ աճով, որ 2017թ-ին համաշխարհային շուկայում ավելցուկ է առաջացրել:




Համաշխարհային արժույթային շուկաներ: Նոյեմբերին ամերիկյան դոլարի դիրքերը մյուս հիմնական արժույթների նկատմամբ թուլացել են, և դոլարի ինդեքսը նվազել է 1.6 տոկոսով:

**Գծապատկեր 8. Դոլարի ինդեքսի<sup>1</sup> դինամիկան**



Նոյեմբերին եվրոն կայուն կերպով ամրապնդել է դիրքերը դոլարի նկատմամբ՝ նախորդ 2 ամիսներ անկման դիմաց աճելով 2.2 տոկոսով: Ռուսական ռուբլին նախ թուլացել, ապա ամրապնդվել է դոլարի նկատմամբ՝ ի վերջո նվազելով 0.2 տոկոսով և պահպանվելով նախորդ ամիս գրանցված մակարդակների շուրջ:

<sup>1</sup> Դոլարի ինդեքսը(DXY) արտարժույթային զամբյուղի նկատմամբ ԱՄՆ դոլարի հարաբերական արժեքի չափն է: Զամբյուղի մեջ ներառված են եվրոն(կշիռը՝ 57.6%), ճապոնական իենը(13.6%), ֆունտ ստեռլինգը(11.9%), կանադական դոլարը(9.1%), շվեդական կրոնը(4.2%) և շվեյցարական ֆրանկը(3.6%):



Ամսվա ընթացքում **Եվրոն** դոլարի նկատմամբ աճի տրենդ է ձևավորել՝ չեզոքացնելով վերջին 2 ամիսների ընթացքում դոլարի վերականգման արդյունքների մեծ մասը: Եվրոյի դիրքերի ամրապնդումն ու դոլարի թուլացումը պայմանավորված էր մի քանի հանգամանքերով: Նախ՝ ԱՄՆ-ում հարկային բարեփոխումների նկատմամբ սպասումները, որոնց համադրումը փաստացի զարգացումների հետ պարզապես հնարավորություն չի տալիս հասկանալ ազդեցության ուղղությունը, սակայն այն, չնայած ամսվա սկզբում դրական էր, ամբողջ նոյեմբերի կտրվածոով բացասական է եղել դոլարի համար: Երկրորդ, ավելի կարևոր գործոնը ԴՊՀ դրամավարկային քաղաքականության սպասումներն էին: Այսպես, չնայած ԴՊՀ-ն շուկային ազդակ տվեց դեկտեմբերին տոկոսադրույքների բարձրացման բարձր հավանականության մասին, միաժամանակ նաև հաղորդեց իր անհանգստության վերաբերյալ՝ կապված ինֆլյացիայի տեմպերի թուլացման հետ:

Մյուս կողմից՝ եվրոգոտում տնտեսական ցուցանիշներն մատնանշում են ավելի բարձր տեմպով դրական զարգացումները: Չնայած ինֆլյացիան ԱՄՆ-ում ավելի բարձր է եղել քան ԵՄ-ում (1.4՝ 2%-ի դիմաց, 12 ամսյա), տնտեսական աճերի տարբերությունը

փոխվել է ի օգուտ ԵՄ-ի(2.5 տոկոս տարեկան աճ՝ 2.3 –ի դիմաց երրորդ եռամսյակում): Բացի այդ՝ կարևոր է տրեմնդն ու աճի իմպուլսը, որը կարծես թե ԵՄ ցուցանիշների դեպքում ավելի բարձր է վեր հրում տնտեսությունը:


*Եթե ամփոփենք՝ եվրոն համառորեն փորձում է չզիջել դիրքերը, և կարծես թե նախանշաններ կան, որ այն կֆիքսվի 1.15 – 1.2 միջակայքում: Համենայն դեպս՝ ենթադրյալ բազային սցենարը հուշում է ամերիկյան և ԵՄ շուկաների նկատմամբ կոնվերգենցիայի մասին, որի տեսանկյունից արժույթային զույգը կարող է խարսխվել ներկա մակարդակներում:*

**Ռուսական ռուբլին** ամսվա առաջին կեսին կտրուկ արժեզրկվել է դոլարի նկատմամբ՝ չնայած թանկացող նավթին: Այս ընթացքում ռուբլին արձագանքում էր ոչ թե վերջինս, այլ զարգացող երկրների արժույթներին, որոնք կտրուկ արժեզրկվում էին դոլարի նկատմամբ՝ ԱՄՆ-ում հարկային քաղաքականության սպասումներով պայմանանավորված:


Միջազգային ներդրողներն այս ընթացքում դուրս էին գալիս զարգացող երկրների, այդ թվում՝ Ռուսաստանի ազգային արժույթով գնանշվող ակտիվներից, որտեղ ակտիվորեն ներդրել էին վերջին ժամանակներս:

Ռուբլին իր «նորմալին» հասավ ամսվա երկրորդ կեսին, երբ գրեթե նույնությամբ կրկնում էր նավթի դինամիկան:

*Ընդհանուր առմամբ՝ ռուբլին վերջին ամիսներին «կուտակվում է» 58-60 դոլարի միջակայքում՝ արժորման ուղղությամբ շարժվելիս ավելի բարձր իմպուլսայնություն ունենալով:*



**Համաշխարհային կապիտալի շուկաներ:** Նոյեմբերին զարգացած երկրների ֆոնդային շուկաներում դրսևորվել են տարբեր միտումներ: Ամերիկյան S&P 500 ինդեքսն աճել է 2.8%, իսկ գերմանական DAX-ը նվազել 1.6 տոկոսով: 2016թ-ի հոկտեմբերից S&P-ն աճել է 20.4, իսկ DAX-ը՝ 22.4%-ով:




**S&P 500** ինդեքսը փաստորեն նոյեմբերին ևս շարունակեց իմպուլսիվ աճի դինամիկան՝ ընդ որում, 2 ամսվա երկրորդ կեսին ցուցաբերելով աճի արագացման դինամիկա: Աճը այս անգամ օժանդակություն էր գտնում հարկային նոր օրինագծերի շուրջ զարգացումներից, ընկերությունների շահութաբերության և ամերիկյան մակրոտնտեսական ցուցանիշներից: Ամսվա ընացքում ինդեքսի տատանողականությունը կտրուկ աճել է (**տե՛ս Գծ. 14՝ S&P VIX**), ինչը տեղի է ունեցել ամսվա երկրորդ տասնօրյակում հարկային բարեփոխումների շուրջ ձևավորված անորոշության աճի հետևանքով: Սակայն սա շատ արագ հարթվել է՝ շուկայի տատանողականությունը վերադարձել է նախկին մակարդակներին, իսկ ինդեքսի աճը շարունակվել է կայուն տրենդով:

Այսպիսով՝ արդեն մեկ փարուց ավելի է, ինչ ամերիկյան ֆոնդային շուկան գրեթե յուրաքանչյուր ամիսը փակում է աճով: Ամերիկյան տնտեսությունն, անշուշտ, այնքան արագ չի վերականգնվում, ինչպես դեպի նոր ռեկորդների է սլանում ֆոնդային շուկան՝

չնայած զսպող ուղղություն ունեցող դրամավարկային քաղաքականությանը: Սակայն գլոբալ մակարդակով առկա անորոշությունը, ԱՄՆ խթանող հարկաբյուջեի քաղաքականության սպասումները, սպասվածից ավելի դանդաղ կերպով տոկոսադրույքների բարձացումը գրավիչ է դարձնում ամերիկյան շուկան, իսկ վերջինիս աճը շղթայական ռեակցիով ավելացնում է ամերիկյան բաժնետիրոջների նկատմամբ պահանջարկը:

**DAX-ի** նվազումը նոյեմբերին պայմանավորված էր գերմանական ընկերությունների շահութաբերության ցուցանիշների անկմամբ, սպասվածից թույլ մակրոտնտեսական ցուցանիշներով և քաղաքական անորոշությամբ:

Նոյեմբեր ամսին զարգացող շուկաների(Emerging markets) ֆոնդային շուկաներն ամփոփող **MSCI ինդեքսը նախ աճել, ապա նվազել է**, ամսվա արդյունքներով իր արժեքն ավելացնելով 0.5 տոկոսով: Ռուսական **MMB5-ն ամսվա սկզբում կտրուկ աճել է, ապա նվազել՝** ամսվա արդյունքերով արձանագրելով 1.8 տոկոս աճ: 2016թ-ի նոյեմբերի նկատմամբ MSCI-ն աճել է 29.9, իսկ MMB5-ն նվազել 0.2 տոկոսով:



**Նոյեմբերին ԱՄՆ պարտքային շուկայում ընդհանուր առմամբ շարունակվել են եկամտաբերությունների աճի միտումները:** ԱՄՆ 10 տարի ժ.կ. պետական պարտատոմսերի եկամտաբերությունն աճել է 3.8 բազիսային կետով կամ 1.6 տոկոսով: 2016թ-ի նոյեմբերի նկատմամբ այս պարտատոմսերի եկամտաբերությունն աճել է 1 տոկոսով կամ 2.5 բազիսային կետով:

**Ամսվա ընթացքում 1 բազիսային կետով նվազել են նույն ժամկետայնությամբ ռուսական պարտատոմսերի եկամտաբերությունները,** ընդ որում՝ նախորդ տարվա նոյեմբերի նկատմամբ նվազումը կազմում է 120 բ.կ.(13.6 տոկոս):



